ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/19718-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-811-01.04.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

1. 1-ին հոդված՝
   1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացվող նոր 169.33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «(խախտումները)» բառերը առաջարկում ենք հանել,
   2) 4-րդ մասում «հոդվածով» բառի փոխարեն լրացնել «հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով» բառերը, նաև «միջոցը չի» բառերի փոխարեն լրացնել «միջոցները չեն» բառերը, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը՝ համաձայն որի «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի:»
2. 3-րդ հոդված՝ «219^1-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «219^1-ին» բառով:
3. 4-րդ հոդված՝
   1) 2-րդ կետի «169^2» թիվն անհրաժեշտ է փոխարինել «169^2-րդ» բառով,
   2) 3-րդ մասը՝ «3) «170.3 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային իրավահարաբերությունների մասով,» բառերը հանել:» բառերը հանել:
4. Առաջարկում ենք շտկել տեխնիկական վրիպակները և նախագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 2442-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «1. Հարկային մարմինները քննում են սույն օրենսգրքի 41.4-րդ, 169-րդ,

169^{9}-րդ, 169^{10}-րդ, 169^{11}-րդ, 169^{12}-րդ, 169^{13}-րդ հոդվածներով, 169^{14}-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններով և 2-րդ մասով, 169.15-րդ, 169.33-րդ, 170^{6}-րդ, 170^{7}-րդ, 170.8-րդ, 170^{13}-րդ, 182.6-րդ հոդվածներով և 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, 169^{1}-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հարկային իրավախախտումների մասով ու 158-րդ հոդվածի 11-րդ մասով, 165-րդ, 165.10-րդ, 169.18-րդ, 169.26-րդ, 169.27-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ